

# ԻՐԱՎՈՒՆԿ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

Rev. H. G. Kalemkarian Meghitaristengas  
Nº 4 Vien

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ  
Ներկայ 1898 թվականի  
Պուշկարիոյ համար տարեկան 12 ֆրանկ  
» » վեցամսեայ 6 »  
Արտասահմանի » տարեկան 14 »  
» » վեցամսեայ 7 »  
ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼԻ

Նամակ դրամ եռայլն դրկել հետեւեալ հասցեով  
ԽՐԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ԼՐԱԳՐՈՅ ՎԱՐՆԱ (ՊՈՒԼԿԱՐԻԱ)  
Редакция на вѣстникъ  
„Иравункъ“  
ВАРНА (България).

Խմբագրութեան ուղղեալ գրութիւն  
էս չեն դրկուիր եւ յարմար դատարան  
ներք միայն կը հրատարակուին անող-  
ջովիւ կամ մասամբ:  
Ծանուցման տղը 20 սանթիմ. երե-  
ֆեմ աւելի անգամներու համար 20 0/0  
գնդ կը լինի:

## ՊԱՏՐԻԱՐՔԸ ԵՒ Բ. ԴՈՒՈՐ

Մեր նախորդ թիւով ծանու-  
ցինք թէ հեռագրի մը համաձայն  
Ս. Օրմանեան բողոքագիր մը զըր-  
կեր է Դատական նախարարին  
կառավարական այն պաշտօնագ-  
րին դէմ որ կը յայտարարէր թէ  
Սսի կաթողիկոսին ընտրութիւնը  
վանական միաբանութեան գործն  
ըլլալով պէտք է որ Պատրիար-  
քարանը խառնուի անոր:

Ուրիշ հեռագրի մը համաձայն  
ալ Ս. պատրիարքը իր հրաժարա-  
կանը զրկեր է արդէն Դրան:

Եթէ այս լուրը հիմնական է,  
պէտք է ըսել թէ իրողութիւնը  
ոչ ցաւալի է եւ ոչ անսպասելի:

Այն խոստումները որոնց հրա-  
պօրէն չլացած՝ Ս. Օրմանեան  
փութկոտ յօժարութեամբ ստանձ-  
նեց Պատրիարքութեան պաշտօնը,  
չատ դժուարին ու փափուկ պա-  
րագաներու մէջ, եթէ կիսով չափ  
միայն գործադրուած ըլլային,  
թրքահայ ժողովուրդին ապրելու  
պայմանները շատ տարբեր եւ շատ  
աւելի նպաստաւոր պիտի ըլլային  
քան ինչ որ են այսօր ու այդ պա-  
րագային մէջ ամէնքս ցաւ պիտի  
զգայինք, տեսնելով որ Պատրի-  
արքը Սսի կամ ուրիշ ու է խնդրի  
մը պատճառաւ կը ստիպուի հրա-  
ժարիլ:

Կ. Պօլսէն ու գաւառներէն հա-  
սած ամէն տեղեկութիւններ եւ  
նոյն իսկ թրքահայ թերթերու լու-  
րերուն սեւագիր ընթերցումը ակ-  
նեւեւ ցոյց կուտան թէ մեր ազգ-  
այնքը Պատրիարքարանը կորսնցուցած է  
այն դիրքը զոր ունէր երբեմն՝  
հաստատեալ օրէնքներու զօրու-  
թեամբ՝ իբրեւ առանձնաշնորհեալ  
ներկայացուցիչ հայ ազգին: Մէկ  
կողմ ձգելով արտաքին երեւոյթը,  
խաբուսիկ ձեւակերպութիւնները,  
որոնք ինքնին բնաւ նշանակութիւն  
չունին, իսկապէս Պատրիարքա-  
րանը դարձած է այսօր Դրան մէկ  
գործակալութիւնը՝ որուն ձեռքով  
կը կարգադրուին մեր ազգ. գոր-  
ծերը թրքական վերին իշխանու-  
թեանց հրահանգներուն համա-  
ձայն: Եթէ այդ գործակալու-

թիւնը՝ Գում-Գարուէն փոխադ-  
րուէր Բ. Դրան շէնքին մէջ, ու  
Պատրիարքին տեղ բարձրաստի-  
ճան հայ պաշտօնէի մը յանձնուէր  
անոր վարչութիւնը, հայ ժողո-  
վուրդին եւ իր ազգ. գործերուն  
վիճակը շատ չպիտի տարբերէր  
իրենց արդի վիճակէն: Չափա-  
զանցութիւն մըն է այս ըսուածը:

Չինք կարծիք:  
Ս. Օրմանեան եւ Յարութիւն  
փաշայի վարչութիւնը, որոնց հը-  
րապուրիչ խոստումներ ըրած էր  
Դուռը, ազգային եւ ոչ մէկ կեն-  
սական հարցի մէջ չունեցաւ ցարդ  
գոնէ չափաւոր յաղորդութիւն մը:  
չկրցաւ՝ հակառակ իր հաճոյակա-  
տար, հիւս ընթացքին, Եւրոպի  
անողոր ու անկարեկիր տիրապե-  
տութենէն հրաման մը, տնօրինու-  
թիւն մը, շնորհ մը ձեռք բերել,  
թրքահայութեան սոսկալի ցաւերը  
ամոքելու կարող:

Այն քանի մը տնօրինութիւն-  
ները, ինչպէս գաղթականներու  
վերադարձը, առաջնորդներու գա-  
ւառները առաքումը եւն, ուր Դու-  
ռը բիշ շատ բարեացակամութիւն  
ցոյց տուաւ, շատ սխալ բան մը  
պիտի ըլլար վերագրել Պատրիար-  
քին գործունէութեան. այդչափ  
բան մը ընել Եւրոպի գիտում-  
ներուն պահանջն էր արդէն: Հայ  
ժողովուրդին անպայման հալածիչ  
բացարձակ թշնամին չուզիր երե-  
ւալ Եւրոպ. ուստի առանց Պատ-  
րիարքի եւ առանց վարչութեան  
ալ հայուն բարեացակամի թիթեւ  
հովիւ պիտի առնէր երբեմն:

Այս պայմաններու մէջ Պատ-  
րիարքական վարչութեան գոյու-  
թիւնը անօգուտ կերեւայ եւ Օր-  
մանեան Սրբազանի հրաժարա-  
կանը, եթէ ստոյգ է, շատ հե-  
ռի է մեզի ցաւ պատճառելէ: Ե-  
թէ անհիմն ալ ըլլայ առ այ-  
ժմ, սա յայտնի է որ մօտ ժա-  
մանակի մէջ անխուսափելի պիտի  
գառնայ: Պատրիարքը որուն ան-  
կեղծութիւնը առ այժմ չենք ու-  
զեր կասկածի տակ ձգել, զինք  
չըջապատող թուրք եւ թրքահայ  
տարբերուն խօսքերէն ու ձեւերէն  
երկար ժամանակ խաբուելէ, սին  
յոյսերով օրօրուելէ ու յուսախա-

բութենէ յուսախաբութիւն զլտո-  
րելէ յետոյ, վերջապէս դառն ի-  
րականութեան կատարեալ գիտակ-  
ցութիւնը պիտի ունենայ. պիտի  
հասկնայ թէ Պատրիարքը ստուեր  
մըն է ալ Պատրիարքարանին մէջ  
եւ պիտի ստիպուի հրաժարիլ, ինք-  
զինք անօգուտ ու հետեւապէս ա-  
ւելորդ տեսնելով արտաքուստ ազ-  
գային երեւոյթը կրող, ներքնա-  
պէս օտարազգիներէ իր ուղղու-  
թիւնը ստացող Պաշտօնատան մէջ:

Հետեւանքը նպաստաւոր կըլ-  
լայ թէ անկասկած. այդ մասին  
ուրիշ անգամ կը խօսինք: Սա-  
կայն այժմէն կրնանք ըսել թէ  
Պատրիարքին հրաժարելու կերպը  
կրնայ իր ազդեցութիւնը ունենալ  
այն ընթացքին վրայ զոր անոր  
հրաժարէն ետքը կառավարութիւ-  
նը պիտի բռնէ մեր գործերուն  
հանդէպ:

Իրողութիւններու ճիշդ, պարզ,  
եւ համարձակախօս պատմութիւնը,  
ազգին վիճակին ճշգրիտ նկարագ-  
րութիւնը եւ ազգին ներկայացու-  
ցիչին մէկ հզօր, բարձրաձայն բո-  
ղոքը պարունակող հրաժարագիր  
մը չկրնար առանց հետեւանքի  
մնալ: Բայց Պատրիարքը պիտի  
ունենայ պարտաճանաչութեան  
այդ արեւութիւնը: Այս է խըն-  
դիրը:

## ԱՅՅԵԼՈՒ ԻՈՎԻԻ

Բիշգոյնիդինէն կիմանանք որ  
ազգային խառն ժողովը սկզբուն-  
քով ընդունելի դատած է Պուլ-  
կարիոյ համար հոգեւոր հովիւ մը  
կարգելու պէտքը, եւ Օրմանեան  
Պատրիարքին յանձնած է՝ արժա-  
նաւոր եկեղեցական մը սահմանել  
եւ առաջարկել վարչութեան:

Այս որոշումը բաւական է ա-  
պահով ըլլալու համար թէ քիչ ատե-  
նէն նոր եկեղեցական մըն ալ պի-  
տի տեսնենք մեր մէջ, պաշտօնա-  
պէս զրկուած, որմէն շատ բան  
կարելի է սպասել, աղէկ կամ գէշ:  
Ուստի աւելորդ չըլլար, կարծեմ,  
այժմէն ակնարկ մը նետել մեր  
կրօնականներու գործունէութեան  
վրայ:

Քաղաքական ինքնավար կեանք.

քէ զուրկ ամէն ժողովուրդի նման,  
մերինն ալ՝ դեռ մեծ մասամբ փա-  
րած մնացած է իր կղերին որուն  
կը վստահի իր ցաւերը եւ որմէն  
կ'ակընկալէ միտարարութիւն մը իր  
վշտաշարժար սրտին:

Փորձը դրական կերպով ցոյց  
տուաւ սակայն որ մեր կրօնական-  
ները՝ իրենց ստուար մեծամաս-  
նութեամբ, ուխտած են կարծես  
իրենց վստահոյն պարտականու-  
թիւնները ընդունել, իրենց ան-  
ձէն դուրս աշխարհ չի ճանչնալ,  
միամիտ ժողովուրդին զգացումնե-  
րը չահագործել եւ անոր բնազ-  
դական կոյր հաւատքը խեղա-  
թիւրել:

Մեր շատ մը վարդապետները  
ծակէ ծակ մտան, երբ Տաճկահա-  
յաստանի ամեն կողմերը ժողովուր-  
դը պէտք ունէր իրենց կազդուրիչ  
խօսքին, գթօտ օգնութեան եւ  
վեհանձն մարդասիրութեան:

Եղբրական օրերու տխուր թա-  
ւալումին մէջ, հայ կղերը՝ իբրեւ  
վատասիրտ հովիւ, բնեց առհա-  
սարակ իր հօտը եւ, քարսիրտ  
անտարբերութեամբ մը, հեռուէն  
հանդիսատես եղաւ ժողովուրդի ա-  
ղիւստով տուայտանքին ու մահա-  
ցումին:

Երբ արեւելքէն ու հարաւէն  
օտարազգի միսիօնարներ հայաս-  
տան կը վազեն, մեր սրբազան հայ-  
րերը գամուած կեցան իրենց գըտ-  
նուած ապահով տեղերը:

Վտանգի ատեն աւելի պարտա-  
ւոր էին ցոյց տալ թէ իրենք Ազ-  
գին անձնուէր պահապաններն են  
եւ անհուն ուժ մը կը գան իրենց  
ներսիքին դիմադրաւելու ամէն  
գժուարութեան:

Անցան արեւնոտ տարիները: Եւ  
կղերի մասին յուսախաբութեան  
դառնութիւնները ալ աւելի խըշ-  
խըշացուցին բարեպաշտ ժողո-  
վուրդին խոցոտած սիրտը:

Ոչ մէկ վարդապետ ուղեց իր  
հանգիստը վրդովել: Ոչ մէկը ա-  
ռաջ նետուեցաւ ժողովուրդին բա-  
րոյական կորովը հրահրելու, վըշ-  
տաբեկ սիրար բուժելու եւ նոր  
հաւատք, նոր յոյս ներշնչելու գէպ  
ի ապագան, գէպի արդարութիւնը:  
Մէկը չուզեր քայլ մը առաջ  
երթալ երբ երկրին մէջ գործելու



պարտականութիւնը հրաւեր կը կարգայ ամենուն ու եթէ Արմաշի սաները չըլլային, Պատրիարքը փոխ-առաջնորդացու իսկ չի պիտի գտնէր գաւառները զրկելու համար։ Սակայն գործը բոլորովին տարբեր կերպարանք կառնէ, երբ խնդիրը արտասահման մեկնելու վրայ է։ Գաւառի տաներու թիւը կը շատնայ այն ատեն։

Եւ, ապահովաբար, շատ մը անգործ եկեղեցականներ արտակարգ իրարանցում մը ունին հիւսիս, տեղիւն գործունէութեան նշաններ ցոյց կուտան, մութին մէջ իրարու դէմ դուրս կը սարքեն, որպէս զի հոգեւոր հովիւ ընտրուին Պոլսկարիոյ համար։

Ասանկ պաշտօնեայի մը պէտք կայ իրաւցնէ։ Ահա այն առաջին հարցումը որ կը զարնէ մեր մտքին։ — Պէտք է խոստովանել որ ժողովուրդը առանց ուղեցոյցի, լըքուած իր խորհող դասէն, օրէ օր բարոյական անկումի մէջ կը գտնուի այստեղ, մինչդեռ մեր այս անստոյգ կացութեան մէջ աւանդներն աւելի պէտք ունին բարոյական ուժերու համախմբումին։ Ընկերական համար չքաւորութեան ու անգործութեան ծնած աղէտները եւ զօրացնելու համար տոկունութեան, մաքառումի ուժը՝ իրերու հակառակութեանց դէմ։

Կը տեսնենք ահագին թուով դաղթականներ, որոնք անգործ ու անվաստակ, վհատեցուցիչ վարանումի մը մէջ կը տարուբերին եւ մէկը չիկայ որ լուրջ միջոցներ ձեռք առնէ եւ յաջողի մի կերպ դարման տանել շուարած, աստանդական հայերու կրծող, սպառող ցաւերուն։ Մտքի ու հոգիի ուրիշ հազար տառապանքներ ժողովուրդը կը չարչրկեն։ Արդ, մեծ պէտք մը կայ հզօր ազգակի մը ուր հասարակութիւնը ամեն կերպ

պով իր գոհացումը գտնէ։

Հոգեւոր հովիւ մը իր պաշտօնին, իր դիրքին, իր վայելած համբաւին ու վստահութեան համեմատութեամբ, կարող է մեծապէս օգտակար հանգիստանալ, շատ մը նեղութիւններէ դաղթականութիւնը փրկել, ազգին թերութիւններն ու ազնուութիւնները, պակասներն, ինչպէս նաեւ առաւելութիւնները կենդանի բարեառութեամբ տալ, ոգեւորել հանրութիւնը, եւ նոր ջանքեր արժարծիւ դէպի ազգային ինքնաճանաչութիւնը։

Ո՛ւր գտնենք սակայն ասանկ հովիւ մը։ Արտասահմանի մէջ, շատ մը տեղեր, մեր մինչեւ ցարդ տեսած կղերականները՝ գրեթէ առանց բացառութեան, ոչ միայն լուրջ գործունէութեան մը սրուարդիւնք չի կրցան ցոյց տալ, այլեւ իրենց անկապ ու դադարկաւիտ քարոզներով յաճախ պատճառ դարձան անօգուտ վէճերու, փառաբեր երկպառակութիւններու։

Այդպիսի Պատրիարքարանը պատասխանատու է իր կատարած ընտրութեան մէջ։ Կըստականք որ իր զլխէն փորձանք մը պակսեցնելու համար բոլորովին դատարկութեամբ մարդ մը պարագայուց ճիշդ չի հանէ։

Հասարակութիւնը զբաղեցնող խնդիրներ շատ կան արդէն, հատկապէս այդ հոգեւոր հովիւը աւելցնելու չէ դարձեալ։

Կարեւոր կէտ մըն ալ կայ, որուն վրայ կուգում հիմակուրէն մեր բոլոր թաղականներուն ուշադրութիւնը բրաւելու։

Մեր եկեղեցականները ֆրասակար մոլութիւն մըն ալ ունին, որով դացած տեղերնին տակն ու վրայ կընեն վարժարաններու գործը։

Կրթական գործին ղեկավարութիւնը ստանձնելու իրենց սախ

տիկ մարմանը, վարժարանի մը տեսուչ ըլլալու իրենց անողորմելի տենչը կը մղէ զիրենք մեքենայութիւններ լարելու, մտքերը պղտորելու եւ կուր մը յարուցանելու ի վնաս նոր սերունդին, ի վնաս ժողովուրդին։

Մեր հոգեւոր հովիւներուն համար, դպրոցական խնդիրներէն դուրս, շատ գործեր կան կատարելիք, կարծաւաճէն աւելի շատ, բաւական է որ զիտնան իրենց պարտականութիւնը ճանչնալ եւ նուիրուել անոր։

Մեր տէրաւորներն ու վարդապետները, մանաւանդ առաջնորդական տեղապահները, ուսուցիչ չեն ու պէտք չէ ըլլան։

Տարբեր պաշտօնով տարբեր կոչումով ձեռնադրուած են անոնք եւ անսպառ պարտականութիւններ ի պաշտօնէ ծանրացած են արդէն իրենց ուսերուն վրայ։

Թող իրենց այդ խաչը կրեն, խղճի մտօք, ճշմարիտ գիտակցութեամբ։ Իսկ դպրոցէն հեռու մնան, որքան կարելի է։ Ասիկա չի մոռնանք։

ՀԱՇՏԱՐԱՐ ԲԱՆԱԳՆԱՅՆԵՐԸ

Մեր թղթակիցներէն մէկը կը գրէ մեզ յունիս 4 թուականով, «Իմ քաղաք տեղեկութեանց համաժողով» ֆէլէկեան եւ իր ընկերը, փաստաբան Պիւլպիւկեան, կը ջանան թէ Պոլսոյ եւ թէ Եւրոպայի յեղափոխականները թակարդի մէջ ձգել։ Ամենէն ցաւալին սա է որ դաշնակցական եւ հնչակեան մէկ ընկեր վարչներու հետ յաջողութեամբ արդէն համաձայնիլ։ Գէթ այսպէս կը հաւատեն վստահելի անձեր։ Այս չարաշուք միջնորդութեան շնորհիւ յեղափոխականներէն ռմանք ասկէ ետքը 20-30 ոսկի

էին խառն թիւք ազգաբնակչութեան հետ միասին, այնպէս որ Լեվսկին ըստիպուած էր գործել նոյն իսկ իւր թշնամիների քթի տակին։ Ամբողջ Բուլղարիան եւ Թրակիան ծածկելով յանձնաժողովներ ի մի խիտ ցանցով եւ նոցա ամենքին ներշնչելով ամենաառաջուն գործունէութիւն, — Լեվսկին մեծ աշխատութիւն գործ գրաւ նաեւ սերտ կապերով իրար հետ միացնել այդ բոլոր հաստատութիւնները, կապել նոցա փոխադարձութեան եւ համերաշխութեան կապերով եւ ստեղծել նոցանից մի հզօր ամբողջութիւն։ Այդ նպատակին հասնելու համար ամենից առաջ հարկաւոր էր հնչուացնել եւ ապահովել յանձնաժողովների յարաբերութիւնները, որի համար Լեվսկին մտածեց եւ կազմակերպեց զազանի սուբհանդակութիւն։ Այնուհետեւ ամեն մի քաղաքում եւ ամեն մի գիւղում, ուր որ կային յանձնաժողովներ, Լեվսկին աշխատեց գտնել ապահով ապաստանարաններ ապստամբութեան գործիչներին — քարոզիչներին, սուբհանդակներին, գործակալներին եւ հայրենասէր մշակների համար։ Միեւնոյն գիտաւորութեամբ նա զաւարի համաձայնութիւն հաստատեց բոլոր զլխաւոր ճանապարհների վերայ գտնուող

ամսական պիտի ստանան եւ մէկ երկու քր համոզուներ են մինչեւ իսկ Պոլսի վերադառնալ։ Յեղափոխական չեղող անձեր ալ կան որոնք ֆէլէկեանի ապահովիչ խօսքերուն վստահելով որոշեր են Կ. Պոլսի վերադառնալ։ Ֆէլէկեան բոլոր վերադարձողներն ալ իբր յեղափոխական պիտի ներկայացնէ կառավարութեան, որպէս զի մեծկակ ըլլայ իր վարձատրութիւնը։ Իսկ վերադարձողներուն անտարակոյս կը սպասէ սոսկալի վիճակ մը, թուրք ոստիկանութեան ափին մէջ։ Արդէն ֆէլէկեանի եւ կարգ մը անբարոյականացած յեղափոխականներու միջեւ գոյացած, համաձայնութեան հետեւանքով արդեօք որքան անկեղծ ու ազնիւ յեղափոխականներ պիտի ձերբակալուին թուրքիոյ մէջ։ Զգուշացուցէք ժողովուրդը այս տեսակ վատազգի յեղափոխականներէ, որովհետեւ հաստատապէս կը խօսուի այստեղ թէ Պոլսկարիա ապրող յեղափոխականներուն մէջ ալ կը գտնուին կասկածելի տարրեր, որոնցմէ պէտք է զգուշանալ թակարդի մէջ չիյնալու համար։ Թէ Բարիքի եւ թէ Անգլիոյ հայ գաղութին սաստիկ զայրոյթ կը պատճառեն այս նոր դէպքերը։»

Լ Ր Ա Ք Ա Ղ

Սուրբանի հրամանով 25 հայ բանտարկեալներ ազատ թողուած են վանի բանտէն։

— Պոլսկար գործակալութեան յունիս 1 թուակիր մէկ հեռագիրը կիսացնէ թէ Ս. Օրմանեան հրաժարել է Պատրիարքական պաշտօնէն։ Հրաժարական ընդունուած չէ Դոնէն եւ կըսուի թէ Սաի Կաթողիկոսական ընտրութեան խնդիրն մասին կարելի պիտի ըլլայ համաձայնութիւն մը գոյացնել

«խանջիներին» (իջեւանատէրերի) հետ, իսկ մի քանի տեղ մինչեւ անգամ նոր խանք չլինել տուաւ եւ յանձնեց հաւատարիմ մարդիկներին վերջապէս ի լրումն այդ ամենի, Լեվսկին, Կարապետով, Անդէլ Կէնչեվը եւ ուրիշները ընդհանուր ուժերով կազմեցին մի կանոնադրութիւն, որի հիման վերայ բոլոր տեղական յանձնաժողովները ենթարկուում էին «Կեդրոնական յանձնաժողովին» իրաւասութեան։ Բայց որովհետեւ կեդրոնական յանձնաժողովի անդամները չէին ապրում մէկ տեղ, այլ ցրուած էին զանազան տեղերում, այդ պատճառով ամեն մէկ անդամը, ունենալով իւր հետ գրաւոր երաշխաւորութիւն, կարող էր բոլորովին անխախտ զգործել՝ առանց ամեն անգամ միւսներին խորհուրդը հարցնելու։ Աւելորդ չենք համարում գրել համառօտ կերպով ծանօթացնել ընթերցողներին այդ վերին աստիճանի հետաքրքրական կանոնադրութեան հետ, որից կարելի է փոքր ի շատէ գաղափար կազմել թէ ինչ կերպով էր վարուում յեղափոխութեան գործը, ինչ նպատակներ ունէր աչքի առաւ եւ թէ ինչ զգացմունքներով եւ գաղափարներով էին ոգեւորուած այդ գործի հիմնադիրները, առաջնորդները եւ պարագլուխները։

**ՍԱՐԿԱՒԱԳ**  
(9)  
2.

Այդպիսով, որոշելով իւր աշխատանքի եւ քարոզչական գործունէութեան ընդհանուր ծրագիրը եւ վերցրնելով իւր հետ վերալիշեալ հրովարտակները, կոչնագրերը ու Լիւբէն Կարապետովի զանազան գրքոյնները, որոնց հետ ընթերցողները արդէն ծանօթ են, — Լեվսկին 1870 թուին նորից ճանապարհ ընկաւ դէպի Բուլղարիա։ Այդ ժամանակուանից սկսած նորա քարոզչական գործունէութիւնը իրաւի զարմանալի է, իսկ նորա ստացած արգիւնքը միանգամայն փառաւոր։ Այժմ նա արդէն գործ ունէր ոչ թէ քաղաքացիների եւ հարուստների հետ, այլ միայն արհեստաւորների, հողագործների, գիւղական ուսուցիչների, շինական աղքատ քահանաների եւ առհասարակ ժողովրդի հասարակ դասի հետ, որոնք ամեն տեղ ազահութեամբ ականջ էին դնում ազատութեան քարոզչի եռանդալից խօսքերին։ Որտեղ որ մտնում էր սարկաւազի ոտքը, այնտեղ անմիջապէս կարծես գետնի տաշից բնում էին տեղական ազգային



Պատրիարքին եւ կառավարութեան միջև:

—Յունիս 1/13 թուականով Գ. Պօլսէն Թանի տրուած հեռագիր մը կը սէթէ Գումգաբուի հայերուն մէջ շատ յուզում կը տիրէ, որովհետեւ յեղափոխական նոր դէպքեր մը կը սպասուի: Ոստիկանական խիստ միջոցներ ձեռք առնուած եւ շատ հայեր ձերբակալուած են:

—Կ. Պօլսոյ համադրային անկեղանոցին մէջ հայ ազգին սեփական մատուցող Տ. Հմայեակ եպիսկոպոսի ձեռքով օծուելու եւ կոչուելու է Ս. Աստուածածնի անունով:

—Յարութիւն բաշա խառն ժողովին վերջին նիստերէն մէկուն չկրնալով ներկայ գտնուիլ, գրաւորապէս յայտնէր է ժողովին թէ Գարակէօզեան կը առնէ խնդրին մէջ ինք կը պնդէ իր նախկին առաջարկութեան վրայ, որ է երբեք չընդունիլ Գարակէօզեան Գրգոր էֆ. ի առաջարկած 20000 ոսկին, այլ պահանջել որ կտակէն դնէ 40000 ոսկի հնչուն դրամ վճարուի ազգին:

—Սահմանուած Արեւելի լրագիրը կայսերական իրաւունքով արտօնուած է վերստին հրատարակուիլ:

—Հանրածանօթ դրագէտ, Եղիա Տէմիրճիպաշեան Եւրոպայէ վերադարձեր է Կ. Տօլիս:

—Կ. Պօլսոյ Ուսումն. խորհուրդը հայերէն լեզուի եւ շարագրութեան մրցում մը կազմեց ազգ. վարժարաններու աշակերտներու միջեւ: Բարձրագոյն դասընթացին Ա. տարիի մրցման մէջ առաջնութիւն ստացել են Սամաթիոյ Նունեան-Վարդանեան վարժարանի աշակերտուհի Ազնիւ Մանուկեան եւ Գատըղիղի Արամեան վարժարանի աշակերտ Գաբրիէլ Տ. Արիստակէսեան. Բ. տարիի մրցման մէջ առաջնութիւն ստացողներն են Էսայեան վարժարանի երկու աշակերտուհիները, Հայկանուշ Թօթուգեան եւ Կատարինէ Բիւթնեան: Իսկ միջին դասընթացին Բ. տարիի մրցման մէջ առաջնութիւն ստացած են Մագրիղիղի Տատեան վարժարանի աշակերտուհի Թագուհի Իսկէնտերեան եւ Ս. Յակոբայ Որբանոցին աշակերտ Շահին Յովհաննէսեան:

—Դրամօժիտի վրայ ազգ. տուրք մը հաստատուելու առաջարկը, զոր ըրած էր Կ. Պօլսոյ Տնտեսական խորհուրդը, վերջնապէս մերժուեցաւ կրօն. ժողովէն՝ սա նկատողութիւնով թէ տուրքին հաստատութիւնը տրամօժիտին պաշտօնական մէկ նուիրագործումը պիտի ըլլար, ինչ որ նախորդ կրօն. ժողովներու եւ պատրիարքներու որոշումներուն ալ տրամադրապէս հակառակ է:

ԻՏԱԼԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

Իտալական վերջին խռովութիւնները, որոնք Միլանի մէջ պարզապէս ապստամբական հանգամանք ըստացան, իրենց ծանր հետեւանքները պիտի ունենան:

Նախարարապետ մարքիզ Թի Ռուտինի նոր օրինադրած մը պատրաստած է այս օրինակ ապառաչ խռովութեանց առջեւն առնելու նպատակով: Օրինադրածը, որ արդէն ներկայացած է երեսփոխանական ժողովին ընդունելութեան, քանի մը տուրքերու թիւնուցումը, մամուլի ազատութեան եւ եւ հրապարակային գումարումներու իրաւունքին սեղմումը կը տրամադրէ:

Արդէն Իտալիոյ մէջ մամուլի եւ գումարումներուն ազատութիւնը աւելի սահմանափակ էր՝ եւրոպական ուրիշ երկիրներու հետ բաղդատմամբ, իսկ երբ Ռուտինի ծրագիրը օրէնքի ոյժ ստանայ, գրեթէ այդ ազատութեան:

նէն բան մը մնացած չպիտի ըլլայ Կարիպալաի հայրենիքին մէջ:

Կը հաւատան թէ նախարարական խորհուրդը որոշած է, եթէ օրէնսդիր մարմինը չի քուէարկէ իրեն ներկայացուած օրինադրածը, լուծել Երեսփոխանական ժողովը եւ որքան կարելի է յապաղեցնել նոր ընտրութիւնները: Այդ ժամանակամիջոցին մէջ Ռուտինի արքայական հրովարտակներու միջոցով օրէնքի ոյժ պիտի տայ օրինադրածին եւ զայն պիտի գործադրէ ամէն խտուրտամբ:

Ընկերավարական ըլլալու պէտք չիկայ զիտել տալու համար թէ օրինական չափազանց խստութիւնները այսօրինակ պարագաներու մէջ ընդհանրապէս կը չեղին իրենց նպատակէն, որովհետեւ չարիքին պատճառները չեն հարուածիր ուղղակի ու պատճառները երբ կան ու կը մնան, արդիւնքը չը կրնար վերնալ:

Երբ իտալական ժողովուրդը իր աղքատ վիճակին մէջ կը հայթայթէ ահագին գումարներ պատերազմական անծայր ծախքերը զոցելու համար, երբ կտաւարութիւնը կը տալու իր բոլոր գրամական կարողութիւնը զոհել պատերազմի պատրաստութեանց, փոխանակ օգնութեան հասնելու աղքատ ու անօթի ժողովուրդին, խիստ ճնշող օրէնքները չեն որ պիտի կըրնան բառնալ ընդհանուր տգիտութիւնը, եւ անոր պոռկոտները:

ԱՆԳԼԵՒՅՈՒՆԱՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՈՒԹԻՒՆԸ

Հեռագիրը ծանուց թէ Բարիլի մէջ կատարուած բանակցութիւնները Նիկիէի խնդրոյն մասին վերջապէս աւարտել են եւ այս մասին երկու տէրութեանց միջեւ դաշնագիր մը ստորագրուած է, որով քաղաքական բաւական կարեւոր խնդիր մը վերջացած պէտք է նկատուի:

Լոնտոնայէ եկած հեռագիր մը կըսէ թէ նոր դաշնագրին համաձայն՝ Նիկիէի ֆոնանայի պիտի մնայ, իսկ Պոստա եւ Պէնէ՝ Անգլիոյ: Մասնաւոր համաձայնութիւններ պիտի գիւրացնեն ֆոնանական ապրանքներու անտուրք փոխադրութիւնը վերին Տահմէի եւ Ստոլին Նիկիէի միջեւ, անգլիական Լազոսի ճամբով:

Յիւանսա պիտի պահէ Պոնա, սակայն Անգլիա ստացած է անկէ 100 հազար մէթրօի չափ զօտի մը ի նպաստ իր Սօքոթօ: Կողմերուն վերջապէս Նիկիէի նաւագնացութիւնը եւ թարթիքներու խնդիրները լուծուած են այս դաշնագրով: Երկու տէրութիւնները ազատ պիտի ըլլան, իրենց կալուածներուն մէջ հաստատել ինչ թարիֆա որ ուզեն, պայմանով որ տուրքերը հաւասար ըլլան անգլիական եւ ֆոնանական ապրանքներուն համար:

ԻՄԲԱԳՐԱԿԱՆ ԱՉԴ

Կը խնդրենք ԴՐԱՄ ԵՒ ԱՊԱՆՎԱԳՐԵԱԼ ՆԱՄԱԿՆԵՐԸ զրկել մեղ՝ առայժմ այս հասցեով: Մ. Զգոնեան վառնա, կամ, այն հասցեով զոր ժամանակը նամակներու մէջ ցոյց տուած ենք մեր բաժնորդներու մէկ մասին:

ՊԱՐԶ ՆԱՄԱԿ, ԼՐԱԳԻՐ եւ այլն զրկել, առաջուան պէս՝ ուղղակի խմբագրութեան հասցէին:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վիէնայէն կիմացնին թէ Ֆրանց Եօզէֆ կայսեր դահակալութեան 50րդ տարեդարձին հանդէսներուն, որոնք պիտի կատարուին զեկտեմբերի սկիզբները, ներկայ պիտի ըլլան Ջարը, Վիէնէլմ կայսրը եւ ամէն երկիրներէ բաղմաթիւ իշխաններ որոնց մէջ են Եգիպտոսի Սուլթը եւ Պարսկաստանի Շահը:

—Յունաթրքական պատերազմին հետեւանք իսլամական զգացումներու վերադարձումը նոյն իսկ ուսական կայսրութեան մէջ իր շօշափելի արդիւնքները ունեցաւ: Թրքական յաղթութիւնը շատ չափազանցեալ կերպերով իմաններու եւ տէրվիչներու ձեռքով նկարագրուեցաւ աշխարհի ամէն կողմի եւ մինչեւ իսկ կեզը: Ասիոյ ուսական նահանգներու իսլամներուն Այս իրողութեան վերադարձը է այն յարձակումը, զոր 1000 իսլամներէ բաղկացած հրոսախումբէ մը կրեց Ֆէրդանա նահանգին մէջ Անտիճանի ուս բանակաւորին: Յարձակումը որ շատ զօրաւոր էր, կրցաւ զսպուել եւ ամէն խիստ միջոցներ ձեռք առնուեցան այսօրինակ դէպքերուն առջեւն առնելու համար: Քննութիւնը երեւան հանց որ Թուրքիոյ երեւակայական մեծ յաղթութիւններու լուրերով յուզուած իսլամները կանոնաւոր կազմակերպութիւն մը յօրինած էին ուսական տիրապետութեան դէմ մաքառելու: Նպատակով:

—Ֆրանսական նախարարութիւնը նորընտիր երեսփոխանական ժողովին մէջ չունենալով բաւական զօրաւոր մեծամասնութիւն մը, ստիպուեցաւ հրաժարիլ: Նախագահը նոր դահլիճի մը կազմութեան համար կը խորհրդակցի քաղաքական անձնաւորութեանց հետ: Հաւանականաբար Տ. Տիւրիւի պիտի յանձնէ նախարարութիւն մը կազմելու հոգը:

—Գերմանիոյ Ռայխսթակի ընտրութիւնները կը կատարուին այժմ: Մինչեւ հիմա ամէնէն շատ շահող կեզրոնի կուսակցութիւնն է, եւ իրմէ ետքը՝ ընկերավարականները եւ պահպանողականները:

—Կալիցիոյ մէջ աւազակախումբեր երեւան ելած են որոնք զիւղական պանդուխտներ կը կողոպտեն եւ կը հրդեհեն: Գործը շատ լուրջ կերեւայ, որովհետեւ աւստրիական կառավարութիւնը ջոկատ մը զինուոր զրկեց ուստիկանութեան հետ միանալով չարագործները հալածելու եւ ձերբակալելու համար:

—Սթանբուլ կիմացնին թէ Ջարին կեանքին զէմ դաւադրութիւն մը երեւան ելած է: Ջարքօէ Սէլօ անունը զիւղին մէջ եկեղեցիի մը օծումին ներկայ պիտի գտնուէր Ջարը, որուն կենալիք տեղը դաւադրները յաջողել էին ական մը բանալու: Օծումէն օր մը առաջ ականը գտնուեցաւ եւ պայթուցիկ նիւթ վերցուեցաւ: Դէպքին վրայ տեղեկագիր մը ներկայացուեցաւ Ջարին որ այնու ամենայնիւ ներկայ գտնուեցաւ օծումին: Ռուսական մամուլին արդիւնքած է այս մասին խօսիլ: Կը կարծուի թէ հարցաքննութիւնները անակնկալ իրողութիւններ երեւան պիտի բերեն:

—Ֆրանսայի վճարեկ առեւանք, որուն Զօլա գիւմած էր՝ Վերսալի պատժական դատարանին անձեռնհասութիւնը հաստատուելու խնդրանք, իբր անհիմն մերժեց ամբաստանեալին փաստաբանին օրինական առաքելութիւնները:

ՄԻԻԹԵՆԵՎ ՎԻԵ

Ալմանիա սէֆիրի Մ. Մարշալ շէրէֆինէ Եւրոպայէն տա պիտի իւրեքմէլ զիյաթէթ վուզու պուլմուշ վէ Սուլթան իմթիյազ նըշանըն կիւմիշ վէ այլըն մէտալարընը սէֆիրի մուշարիլէյհէ Իհսան իթմիշ տիր: Մ. Մարշալ մէէլուէն Պէնիլէ կիթմիշ տիր:

—Քօսովօ վիլայէթի Արնաւուտ լարըն հարէքիւթընտան տօլայը Սերպիա թարաֆընտան վերիլէն նօթայա Պապը Ալի շիմիյէ գատար հիշ պիր ճէվապ վերմէտի կինտէն, Սերպիա մապահաթ կիւղարը Եւրոպայ իրինճի պիր նօթա իրապ իլէ, Արնաւուտարըն էլինտէն գուրթուլմազ իշիւն իշլէրին իթէր վէ մալլէրինի Եօզ պահա իլէ էլտէն չըգարուպ Սերպիա, յա գաշան խրսթիյանլարըն հալիւնի թարիֆ, պուլտան իլէրու կէլէճէթ թէհլիքէյի իղահ վէ շուվուզուաթլարըն էօնիւնիւ ալմազ իշիւն լաղըմ օլան թէտպիլլէրին Պապը Ալի թարաֆընտան իթմիլիսազ օլընմասընը թէքար թալէպ իթմիշ տիր:

—Ելմէնտէն ալընան մալիւմաթա նաղարէն՝ ասըլար Ելլիլէ հալիտէն Եւրոպա պուլարաթ կիթտիքճէ գուլվէթլէշմէրտէ տիրլէր: Շու իսթիլալըն սէպէպի գըթլըգտան պաշգա ասըրի գօմանտանը Ֆէյլի բաշանըն իճրա իթտիկի զուլմ ու թէգեիգաթ տըր: Պիր թէլէկրաֆէ կէօրէ՝ ասըլար հիւքիւմէթ մէրքէլի օլան Սանա, այը ապլօզայա ալմըշ օլտուզլարընտան, իսթիլալըն էօնիւնիւ ալմազ իշիւն կէօնտէրիլէն Ելլի վալի հիւսէյին հիլմի բաշա Հատէյտայա գաշմաղա մէճպուր օլմուշտըր: Պապը Ալի 7000 ասըր տահա Ելմէնտէ կէօնտէրիլմէսինէ գարար վէրտի:

—Թիւրք հիւքիւմէթի Գաուլըսուհէ (Ալմանիա) ֆիլէնկ ֆապրիգասըն՝ Մաւզէր թիւֆէնկէրի իշիւն 220 միլիոն ֆիլէնկ սիւրալըշ վէրմիշ վէ պուլտան տօլայը պահրիյէ նէղարէթի վէ մէլքէր ֆապրիգա պէյնիտէ պիր գօնթրաթ իմզալսնմըշ տըր:

—Պու սէնէ թալմինէն 100000 իսլամ Մէքքէյէ հաճըլըղա կիթմիշլէր տիր:

—Կէնճ թիւրքիա կիւրուհիւտէն թուլալը հիլմի թարաֆընտան թէնէվտէ «Իլք վէ սօն պիր զայրէթ» սէրլէվհասըլա թապու նէշը օլունան քիթապճըգ կիլիլ սուրէթտէ Սթանպուլ էհալիսինէ տաղըտըլմըշ տըր: Հիլմի էֆէնտի պու նէշրիյաթընտա շիմտիքի Սուլթանտան թիւրքիանըն իսլայը իշիւն հիշ պիր շէյ պէլլէնիլմէլ օլտուղընը պէյան վէ թիւրք էհալիսինի՝ ճալիլլէրտէ վէ սաիր մահալլէրտէ թօլլանըպ, կիրիտ մէսէլէսինին թիւրքիա մէնֆատաթընա մալմաֆիազ սուրէթտէ հալլ օլունմասընը րէճա իթմէք իւղըն:



ՏԱԽԻԼԻՅԷ

պէսօրէն տեղեկութիւն խիստ պէն պիտի արգուհալ թերթիկ իմենէն թէյլիկ իմիւն տիրէ. էկեր տեղ- լեթիւն պաւ արգուհալը նազարը տըգգաթա ալմաղար իսէ, օ վա- զըթ իսլամ էհալի գըլըճը չէք- մէլի իմիւն:...

—Գարա թարիդի իլէ թէսա- լիատան ալմեթ իտէն թիւրք աս- քէրէր էսկի մահալլէրինէ վասըլ օլմուշար վէ թէսալիա սինօրըն- տա 16 թապուր բիատէ ասքէրի վէ պիր ալայ սիւվարի ասքէրի գալմըլ տըր: Եպիրոս սինօրընտա տախի 12 թապուր բիատէ ասքէր պուլընթօր:

—Սուլթան թարաֆընտան Սօ- ֆիա օսմանլը գօմիսէրի Նուսուհի պէյին զէմէսինէ պիրինճի, վէքէ- րիմէսինէ իքինճի Եէֆազաթ նի- շանլը իհասն օլունմուշ տըր:

—Սթանպուլտա, Պէյօղլուտա վէ իւսքիւտարտա եհնի եաքըլաճագ հապսանէլէրին սըհհիյէ ուսուլա- րընա մուաֆագ սուրէթտէ ինչա օլունմալարը Եուրայի տեղեթ թա- րաֆընտան թահթը գարարա ա- լընմըլ իմիւն:...

Իսլահաթ իշթէ պաշլա՛յօ՛ր:.... —Բուսիա էլչիսի Մ. Զինօվի- էֆ գըրկըն զէմանընտա Բուսիա- յա հիճըթ իթմիշ օլան էրմէնի- լէրին եհնիտէն թիւրքիայա ալ- տէթի հազգընտա Պապը Ալիյէ պիր նօթա վէրմիշ տիր:

—Սոն մուհարէպէյէ իշթիրաք իտէն ասքէրի գօմանտանլարըն- հազգը բաշա Եամ գօմանտանը նասպ օլունմուշ տըր:

Բիւվայէթէ Կէօրէ՛ հազգը բա- շանըն տիկէր արգատաշլարը տա- խի պիրէր մէմուրիյէթլէ վիլա- յէթլէրէ կէօնտէրիլէճէքլէր վէ էտ- հէմ բաշա թիւրքիանըն եհտի օր- տուլարընա միւֆէթթիշ թային օ- լունմաճագ տըր:

—Բուլ կաղէթալարընտա օ- գունտըղընա նազարէն՝ Բէթիմօ (Կիրիտ) մէտրօքօլիտի Դիոնիսիոս եպիսկոպոս պիր կոնգալ չըգարըպ միւսլիմանլար իլէ տօթմանէ սու- րէթտէ տալրանմալարընը Բուլ է- հալիսինէ նասիհաթ իթմիշ տիր:

—Կէօյա Լարիստա Բուլլար իսլամ էհալիսինէ թաղեիգաթ վէր- մէքտէ օլտուգլարընտան Պապը Ալի պիր նօթա իլէ պու վուգուլաթ իւ- ղէրինէ սէֆիլէրին տըգգաթընը ճէլպ վէ միւթէճապըլարըն ճէլա- լանտըրմասընը թալէպ իթմիշ տիր:

—Կիրիտ սուլարընտա պուլը- նան ֆրանսըլ հարպ սէֆինէլէրի գօմանտանը ամիրալ Բօթիէ՛ ֆը- րանսա պահրիյէ նէղարէթինէ պիր րարօրթօ թագտիմ իլէ Բարիզտէն Կիրիտէ 40 ժանտարմա կէօնտէ- րիլմէսինի թալէպ վէ պիր օսման- լը թապաասը ատայա վալի նասպ օլունըր իսէ, էհալի պէյնիտէ սուլըն իպգասը միւմքին օլմա- յաճաղըն պէյան իթմիշ տիր:

Բրէնս հազրէթլէրինն եազըն- տա Պուկարիանըն պաշլըճա չէ- հիւրէրինի զիյարէթ իտէճէքլէրի- նի թաւն կաղէթապընա վէրիլէն պիր թէլէկրաֆ պիրիթիյօր:

—Էվրօքա կաղէթալարընտա օ- գունտըղընա նազարէն՝ հէօքիւմէթ պաղը Բարիզ պանքէրլէրինտէն 15 միլիոն ֆուանք իսթիգրալ ի- տէճէք իմիւն: Ֆրանսա խարիճիյէ նազըրը Մ. Հանօթօ իսթիգրազըն թէսվիյէսի զըմընտա զայրէթտէ պուլունմըլ տըր:

—Պուկարիա մասլահաթկիւ- ղարըղընտա եախօտ թիւճճար վէքիլէրինէ քէնտի բասթօթլա- րընը վիլէ իթտիլմէքսիլին թիւր- քիատան Պուկարիայա կէլէն եօլ- ճուլարտան պէյէր ֆրանք ճէլաի նազտիյէ ալընմասընա վիւքէլա մէճիլիսի գարար վէրմիշ տիր: Պու- ճէլալը էօտէմէք իսթէմէյէն եօլ- ճուլար կէլտիլէրի մահալէ կէրի կէօնտէրիլէճէքլէր տիր:

Վիլէ խարճը 50 սանթիմ տիր: —Գունիա շաէ Գէօսթէնտիլ վէ ճիւլարընտա թօլը իլէ գարըլըք չէտիտ պիր եաղմուր կէլմիշ վէ պաղլարա, մէյվէ աղաճլարըն վէ տիկէր մահսուլաթա պէօյիւք խա- սարաթ վէրմիշ տիր:

—Ճիւնուպը Պուկարիատա ար- բա վէ չալտար օրաղը պաշլանմըլ տըր:

—Բրէնս հաղրէթլէրինէ հազա- րէթ թէօհմէթիլ իլէ Սվօպօտա կա- ղէթապընը իքի մէսուլարը թահ- թը մուհաքէմէյէ ալընմըլար տըր: Պու տէֆա Սօֆիա պիտայէթ մահ- քէմէսի թարաֆընտան վէրիլէն գարար մուճիպիլինճէ՛ շիմտիքի մու- հարրիլի մէսուլը օլան Կ. Օպրէշ- քօֆ իքի սէնէ հապսա վէ 1000 ֆուանք ճէլայա, էվվէլէի մէսու- լը Կ. Ալէքսիէֆ իսէ պիր սէնէ հապսա վէ 3000 ֆու. ճէլայա մահ- քիւմ օլմուշար տըր:

—Թուրքիա իտարէսի թահ- թընտա էլիլմէքտէ օլան խրիս- թիյան միլլէթլէրին հուգուգընը միւտաֆաա իթմէյէ մախսուս Ավ- րօնօմիս նամընտա եհնի պիր կա- ղէթա պու տէֆա Սօֆիատա նէլը օլունմաղա պաշլամըլ տըր:

—Քաղանլըք սաքիլէրինտէն Կ. Սլաֆի Սլաֆօֆ՝ Սիմիթլէրի քէօ- յիւ ճիւլարընտա ալթըն մատէնի արամագ իչիւն թիճարէթ վէ զը- րաաթ նէղարէթիլտէն մէլըլունի- յէթ ախլ իթմիշ տիր:

ԱՐՆԱՎՈՒՏԼԱՐ

Արնավուտար մայիս 30տա Պէ- րանա գաղասընա եազըն ալթը խրիսթիյան քէօյլէրի իւլէրինէ հիւճուլ իլէ անլէրի եազմըլար վէ սէֆիլ էհալիյի Գարատաղ թօրաղընա գաշմաղա մէլալուր իթմիշլէր տիր: Գարատաղ մասլա- հաթկիւլարը Մ. Պաքիշ Պապը Ալիյէ միւրաճաաթ վէ շու ֆէնա:

Լըզլարըն մէնի իչիւն չէտիտ թէտ- պիրլէր իթթիլազ օլունմասընը թալէպ իթտի, Գունիա 1տէ Պէ- րանա եազընընտա Արնավուտար վէ Գարատաղ սինօր պէքճիլէրի պէյնիտէ պիր միւսատէմէ վու- ղու պուլմուշ վէ Արնավուտար իւլ քէօյ տահա եազմըլար տըր: Մ. Պաքիշ հիւքիւմէթ թարա- ֆընտան նէ կէօնա թէտպիրլէր մէվզըլը իճրայա գօնուղընըն քէնտիսինէ պիրիլմէսինի թա- լէպ իթտի: Պապը Ալի՛ լաղըմ կէ- լէն հէր թէտպիրլէրին իթթիլազ օլունմըլ օլտուղընը պէյան վէ Գարատաղ հիւքիւմէթիլին տախի քէնտի թօրաղընտան Արնա- վուտարըն ճէպրէն կէրի իթմէսի- նի Մ. Պաքիշէ րէճա իթտի:

Պապը Ալի վէ Գարատաղ մաս- լահաթկիւլարը պէյնիտէ վուգու- պուլան իչպու մուխապէրաթ թիւրք էհալիսինին հիտտէթիլին մուճիպ օլմագտա տըր, զիրա թիւրքլէր օ- լան ֆէնալըզլարըն Արնավուտար թարաֆընտան վուգու պուլմալըպ, պիլ աքս, Գարատաղըլարըն իս- լամլարա զատը ու զուլմ իթմէքտէ օլտուգլարընը իտտուս իթմէքտէ տիրլէր: Մէհաֆիլի սիտսիյէտէ պու մէսէլէյէ պէօյիւք էհէմիլիյէթ վէրիլմէքտէ տիր: Պապը Ալի էմ- րի իլէ իքէքտէն իւլ թապուր ասքէր Պէրանայա կէօտէրիլմիշ, Պէրանա գալմագամ աղ օլընմուշ վէ վուգուլաթ թահգիլի ու թէ- ճէսսիւս իթմէք զըմընտա պիր գօմիսիոնը մախսուսըն մահալի մէլ քիւրէ կէօնտէրիլմէսի թահթը գա- րարա ալընմըլ տըր:

Արնավուտարըն շու իսթիլա- լըն իւլ տէօրթ կիւն էվվէլ պիր աղ թէսքին օլմուշ օլտուղընը Մ- ժանա Պուկար» պիրիթիյօր:

Մ ՈՒ ՀԱՐԷՊԷ

Խուսուսի պիր թէլէկրաֆա կէօ- րէ, Կուանթանաճօտա գարայա չըքմըլ օլան Ամէրիգալըլարտա սարը սըթմա թէսմիյէ օլունան տէհէթլի խասթալըք զուհուր իթմիշ վէ Սանթիալօ էօնիւնտէ պուլունան պահրիյէ ասքէրինտէ տախի եալըլմագտա իմիւն: Հալա ֆէվզէլատէ սըճագ վէ տէվալի սուրէթտէ եաղմուր կէլմէքտէ տիր: Չամսըլըն չօգլուղընտան ասքէր հարէքաթը քէք միւլքիլ օլմուշ տըր:

Գունիա 4տէ իքի Ամէրիգա սէ- ֆինէլէրի Բունթա Գապրէրա իւ- ղէրինէ աթէշ իթմիշլէր, Սպանիա թապիասը տախի գարատան ճէ- վապ վէրմիշ վէ պատէհու սէֆինէ- լէր կէրի չէքիլմիշլէր տիր:

Ամէրիգալըլար Գապանասա եա- ղըն գարայա չըքմաք իչուն իթ- տիլէրի թէլէպպիլտէ Սպանիա- լըլարըն մուգալմէթի սէպէպիլլէ մուլաֆագըլէթ պուլամամըլար տըր:

ՉԱԽԻՐԻ ԲԻԱՑԱՍԻՐ

Վառնա 9 Գունիս Պուշտալ Վալօն, լիպրա 47-51, հէքթօլ. 9.50-10 ֆրանք Արապա, լիպրա 47-55 հէքթօլ. 8.50-10 ֆրանք

Արքա լիպրա 38-40, հէքթօլ. 4.80-5.20 ֆրանք

Մըսըր Վալօն հօգ.լիպրա 57-58 հէք. 7-7.50 ֆրանք Արապա, լիպրա 57-60 հէքթօլ. 7.80-8 ֆրանք

Ֆառաշիս 100 օգգասը 15-20 ֆրանք՝ մալա կէօրէ Արապա մուամէլէսի՛ Նարօլէնն 21 ֆու. հիտապը իլէ տիր. Կիւնտէ 2-3 արապա պուղ- տայ, 3-4 արապա արբա կէլմէք- տէ տիր:

Լոյս տեսաւ

ՐԱՅՅԻԻ

ՍՍՄՈՒԷԼ

Պատմական վէպը

Ա. Բ. Գ. Գիւրք

Հեղինակին վերջին պատկերով

Գինն է 7 շիլինգ

Իսկ «Դաւիթ-Բէկ» հատոր Ա. Բ. Կ. վերջաբանով և «Կայ- ծեր» հատոր Բ. լիակատար, լոյս պիտի տեսնեն ներկայ տարուայ ընթացքում, որոնց բաժանորդա- գրութիւնը շարունակում է. եր- կու գրքի միասին բաժանորդա- գրին է՝ 10 շիլինգ. իսկ լոյս տես- նելուց յետոյ կարծեսան 14 շիլինգ: Զանկացողները թէ՛ Սամուէլի և թէ՛ Բաֆֆիի միւս երկերի հա- մար, կարող են գիմիլ այս հասցէին

Mme Raffi

270, Uxbridge Road.

Shepherd's Bush,

London W.

«ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇՍԱՐԱՆ» Նոր քաղաքում ԻՌԱՆԻՈՒՆՔ

Սիմիոնօֆի դրամատան դէմ գտնուող նախկին «Մասիս» ի չէն- քին մէջ, ուր կը պատրաստուին տան խոհանոցի յատուկ մաքու- թեամբ համադամ կերակուրներ և անուշեղէններ չափաւոր գինե- րով: Փորձելը ստուգել է: Բաժանորդագրութիւն կ'ընդուն- ուի դիւրամատչելի պայմաններով:

Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն ՀԱՅ ԳԱՂԱՎԱՆՈՒԹԵԱՆ Ի ՀՆԴԿԱՍՏԱՆ

Հնգկաստանի հայ գաղութի մասին պատմական և ազգագրա- կան խիստ շահեկան տեղեկու- թիւններ պարունակող սոյն անգ- լիէրէն երկասիրութիւնը, զոր հե- ղինակը Տիար Մեսրոպ Սէթ- ևանց՝ Կալկաթայէն զրկած է մեզ, կարժէ որ ամէն անգլիագէտ ազ- գայիններու թանգարանին մէջ գտնուի:

Գինն է 6 լէվ

Կեդրոնատեղի վառնա Ա. Չարպիսեանի և «Հայկական Գրատուն»